

(79-80) Երկրի տարածքը կազմում է 30 000 կմ², երկաթուղիների երկարությունը՝ 6000 կմ, բեռնափոխադրումների ծավալը՝ 80000 տ,բեռնափոխադրման միջին հեռավորությունը 200կմ:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

79 Որոշել երկաթուղային ցանցի խտությունը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

80 Որոշել բեռնաշրջանառությունը:

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1) Նկարում ո՞ր տառով է տրված հյուսիսային բևեռային շրջագիծը:

- 1) Գ
- 2) Դ
- 3) Բ
- 4) Ա



2) Երկու քաղաքների միջև եղած իրական հեռավորությունը 600 կմ է: Որք՞ան կլինի նրանց միջև հեռավորությունը 1:3000000 մասշտաբի քարտեզի վրա.

- 1) 10 սմ
- 2) 25 սմ
- 3) 20 սմ
- 4) 30 սմ

3) Երկրագնդի միջին շառավիղը կազմում է.

- 1) 6371 կմ
- 2) 6378 կմ
- 3) 6351 կմ
- 4) 6357 կմ

4) Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ամբողջ երկրագնդի, նրա մայրցամաքների կամ երկրների ընդհանրացված պատկերը թղթի վրա կոչվում է հատակագիծ:
- 2) Երկրի որևէ կետի հեռավորությունը գրոյական միջօրեականից՝ արտահայտած աստիճաններով կոչվում է աշխարհագրական երկայնություն:
- 3) Անվանական մասշտաբը արտահայտվում է կոտորակի տեսքով:
- 4) Երկիրն Արեգակին ամենամոտ մոլորակն է:

5) Այն հարթավայրը, որը գտնվում է մինչև 200 մ բացարձակ բարձրության վրա, կոչվում է.

- 1) սարահարթ
- 2) բարձրավայր
- 3) դաշտավայր
- 4) ցածրավայր

75) Քարտեզի վրա որ տառին են համապատասխանում բնակչության առավել բարձր բնական աճ ունեցող երկրները.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



76) Օդի բացարձակ խոնավությունը 15գ/ խոր.մ: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

(77-78) Գետի ակունքի բարձրությունը 2000 մ է , իսկ գետաբերանինը՝ 500մ: Նրա երկարությունը 300կմ է:

77) Որոշել գետի անկումը:


78) Որոշել գետի միջին թեքությունը:

73 Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ.

- 1) «Կարմիր գրքի» ստեղծումը
- 2) Հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
- 3) Արհեստական անտառների ստեղծումը
- 4) Ցանքաշրջանառության կազմակերպումը:

74 Կլիմայական ո՞ր գոտում են գտնվում 3Ա, 3Բ և 3Գ թվերով նշված տարածքները:

- 1) մերձարևադարձային
- 2) բարեխառն
- 3) արևադարձային
- 4) արկտիկական



6 Ցամաքի բնական զոգավորությունը, որը լցված է ջրով և անմիջական կապ չունի ծովի հետ, կոչվում է .

- 1) գետ
- 2) ջրամբար
- 3) լիճ
- 4) ճահիճ

7 Կլիմայական քարտեզի վրա հավասար ջերմաստիճան ունեցող վայրերը միացնող գիծը կոչվում է.


- 1) իզոթաթ
- 2) հորիզոնական
- 3) իզոթերմ
- 4) իզոթար

8 Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 27°C է, իսկ գագաթին՝ 9°C: Լեռան հարաբերական բարձրությունը կլինի.(հաշվարկը կատարել 6° -ով).

- 1) 3000մ
- 2) 1000մ
- 3) 4000մ
- 4) 2000մ


9 Նկարում պարկերված է.

- 1) հորստ
- 2) գրաբեմ
- 3) պլատֆորմ
- 4) գետսինկլիզնալ



10 Նկարում պատկերված է.

- 1) մուսսոն
- 2) ցիկլոն
- 3) պասսատ
- 4) անտիցիկլոն



11 Աֆրիկայի արևելքում գտնվող կղզին է.

- 1) Թասմանիան
- 2) Մադագասկարը
- 3) Կուբան
- 4) Նոր Երկիրը

12 **Հյուսիսային Ամերիկայի լեռներն են.**

- 1) Ժայռոտը և Ապալաչները
- 2) Մեծ Ջրբաժանը և Անդերը
- 3) Կոորդիլիերաները և Ալպերը
- 4) Մեծ Կովկասը և Սկանդինավյանը

13 **Այդ բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ, տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունեն Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Այդ բնական զոնան է.**

- 1) անապատը
- 2) տայգան
- 3) սավանան
- 4) տունդրան

14 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Աֆրիկայի ամենաերկար գետը Ջամբեզին է:
- 2) Մեծ Ջրբաժան լեռների առանձին գագաթներ ծածկված են սառցադաշտերով:
- 3) Կամերուն հրաբուխը գտնվում է Աֆրիկայում:
- 4) Հուանհե և Յանցզի գետերը պատկանում են Ատլանտյան օվկիանոսի ավազանին:

15 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Հարավային Ամերիկան ամբողջությամբ գտնվում է արևմտյան կիսագնդում:
- 2) Հարավային Ամերիկայի ամենաբարձր լեռը Կիլիմանջարոն է:
- 3) Անդերը երիտասարդ բարձր լեռներ են:
- 4) Հարավային Ամերիկայի ամենաջրառատ գետը Ամազոնն է:

16 **«Թերակղզի – մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Սոմալի - Ավստրալիա
- 2) Կալիֆոռնիա - Աֆրիկա
- 3) Կանչատկա – Հյուսիսային Ամերիկա
- 4) Արաբական - Եվրասիա

17 **«Անապատ – մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Կալահարի - Ավստրալիա
- 2) Ատակամա – Հյուսիսային Ամերիկա
- 3) Մեծ Ավազային - Հարավային Ամերիկա
- 4) Գոբի - Եվրասիա

18 **Ատլանտյան օվկիանոսում գտնվող կղզիներ են.**

- 1) Մադագասկարը և Շրի Լանկան
- 2) Նոր Զելանդիան և Նոր Գվինեան
- 3) Սախալինը և Սիցիլիան
- 4) Իսլանդիան և Իռլանդիան

67 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացմանը նպաստել է ուրբանիզացման բարձր մակարդակը:
- 2) ՀՀ մեքենաշինության զարգացմանը նպաստել է աշխատանքային ռեսուրսների առկայությունը:
- 3) ՀՀ էներգետիկայի զարգացմանը նպաստել է վառելիքային ռեսուրսների առկայությունը:
- 4) ՀՀ սննդի արդյունաբերության զարգացմանը նպաստել է անտառային ռեսուրսների առկայությունը:

68 **Ընտրել լանդշաֆտային գոտիների ճիշտ շարքը՝ ըստ նրանց բացարձակ բարձրությունների աճման.**

- 1) չոր լեռնատափաստանային, ալպյան, լեռնաանտառային, կիսաանապատային:
- 2) լեռնաանտառային, կիսաանապատային, ալպյան, չոր լեռնատափաստանային:
- 3) ալպյան, չոր լեռնատափաստանային, լեռնաանտառային, կիսաանապատային:
- 4) կիսաանապատային, չոր լեռնատափաստանային, լեռնաանտառային, ալպյան:

69 **Ի՞նչն է ընդհանուր Շիրակի և Արարատի մարզերի համար.**

- 1) Սահմանակից են Թուրքիային:
- 2) Հարուստ են տուֆի պաշարներով:
- 3) ՀՀ ամենախտաբնակ մարզերն են:
- 4) Զգալի տարածում ունեն լեռնատափաստանները:

70 **Աղտոտված օդային ավազան ունեցող քաղաքներն են.**

- 1) Դիլիջանը և Վանաձորը
- 2) Ծաղկաձորը և Երևանը
- 3) Հրազդանը և Ալավերդի
- 4) Գյումրին և Ջերմուկը

71 **Անտառային ռեսուրսներով ապահովված երկրներն են.**

- 1) Շվեդիան և Կանադան
- 2) Եգիպտոսը և Բրազիլիան
- 3) Հնդկաստանը և Արգենտինան
- 4) Ճապոնիան և Ուզբեկստանը

72 **Ընտրել ճիշտ պատասխանը. «Ջերմոցային էֆեկտը» պայմանավորված է.**

- 1) արեգակնային ճառագայթների կտրուկ ավելացմամբ
- 2) մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ
- 3) մթնոլորտի շրջանառությամբ
- 4) սառցադաշտերի հալմամբ

62 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մի ազգի մեջ մյուսի ծուլունը՝ նրա լեզուն, մշակույթը և ազգային սովորույթները յուրացնելու միջոցով կոչվում է ազգային համախմբում:
- 2) Գյուղական տարաբնակեցման ցրված ձևերը տարածված են ԱՄՆ-ում, Կանադայում և Ավստրալիայում:
- 3) Ռասաները միմյանցից տարբերվում են մարդկանց թվաքանակով, լեզվով և կրոնով:
- 4) Բնակչության ծերացման գործընթացն առավել բնորոշ է զարգացող երկրներին:

63 Ընտրել սխալ պատասխանը Ռուսաստանի համար.

- 1) Տարածքի մեծությամբ աշխարհում առաջինն է:
- 2) Նավթի և գազի արդյունահանմամբ աշխարհի առաջատար երկրներից է:
- 3) Բնակչության թվով աշխարհում երրորդն է:
- 4) Բուսաբուծության առաջատար ճյուղը հացահատիկային տնտեսությունն է:

64 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Տարվա տաք կեսին Հայաստանի տարածք են ներխուժում արևմտկական օդային զանգվածները:
- 2) ՀՀ-ն հարևան տարածքների նկատմամբ ունի ավելի մեծ միջին բարձրություն:
- 3) ՀՀ գետերը մեծամասամբ նավարկելի են և ունեն հոսքի կայուն ռեժիմ:
- 4) ՀՀ տարածքի 20%-ը զբաղեցնում են անտառները:

65 «Գետ-ջրամբար» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Քասախ- Ապարանի
- 2) Որոտան – Կեչուտի
- 3) Ազատ- Տոլորսի
- 4) Արփա- Սպանդարյանի

66 Ընտրել հանքավայրի և հանքատեսակների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------|------------------|
| 1. Սոթք | ա. պղինձ |
| 2. Կապան | բ. պղնձամոլիբդեն |
| 3. Ազարակ | գ. երկաթ |
| 4. Սվարանց | դ. ոսկի |

- 1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 2) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
- 3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

19 Քարտեզի վրա Բրազիլիական սարահարթը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



20 Քարտեզի վրա Չիլի պետությունը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

21 Պետական կառավարման այն ձևը, երբ գերագույն իշխանությունը փոխանցվում է ժառանգական իրավունքով, կոչվում է.

- 1) միապետություն
- 2) հանրապետություն
- 3) համադաշնություն
- 4) դաշնություն

22 Որևէ ժամանակահատվածում բնակչության ծնելիության և մահացության տարբերությունը կոչվում է.

- 1) բնակչության մեխանիկական աճ
- 2) բնակչության բնական աճ
- 3) միգրացիա
- 4) ժողովրդագրական պայթյուն

23 Դա գունավոր մետաղածուլության ճյուղ է; Այն հումքատար է, ուստի կողմնորոշվում է դեպի հանքավայրերը: Այդ ճյուղն է.

- 1) պողպատի ծուլում
- 2) պղնձի ծուլում
- 3) ալյումինի ծուլում
- 4) ոսկու ծուլում

24 Երկրի տարածքը կազմում է 30000 կմ², բնակչության թիվը՝ 4.2 մլն: Բնակչության միջին խտությունը կլինի.

- 1) 140 մարդ/կմ²
- 2) 80 մարդ/կմ²
- 3) 160 մարդ/կմ²
- 4) 60 մարդ/կմ²

25 «Ժողովուրդ-լեզվախումբ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

- 1) վրացիներ – թուրքական
- 2) ուկրաինացիներ – սլավոնական
- 3) իսպանացիներ – ռոմանական
- 4) պարսիկներ - իրանական

26 «Հանքային ռեսուրս - առաջատար երկիր» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) նավթ – Թուրքիա
- 2) երկաթ- ճապոնիա
- 3) ածուխ – Ֆրանսիա
- 4) գազ – Ռուսաստան

27 «Պետություն-մայրաքաղաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

- 1) Բրազիլիա - Ռիո դե Ժանեյրո
- 2) Իրան – Թեհրան
- 3) Հնդկաստան - Դելի
- 4) Մեծ Բրիտանիա – Լոնդոն

28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Գերմանիայի արդյունաբերության առաջատար ճյուղը մետաղաձուլությունն է:
- 2) Գերմանիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 3) Գերմանիան գտնվում է տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլում:
- 4) Գերմանիան վարում է բնակչության բնական աճը կրճատող ժողովրդագրական քաղաքականություն:

29 Նոսր բնակեցված երկրներ են.

- 1) Հայաստանը և Բելգիան
- 2) Ավստրալիան և Կանադան
- 3) Ինդոնեզիան և ճապոնիան
- 4) Գերմանիան և Ֆրանսիան

30 Դաշնային պետություններ են.

- 1) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան
- 2) Ռուսաստանը և ԱՄՆ-ը
- 3) Հնդկաստանը և ճապոնիան
- 4) Թուրքիան և Գերմանիան

57 Ընտրել սխալ պատասխանը.

- 1) Աշխարհի ամենամեծ ջրիավաք ավազանն ունի Ամազոն գետը:
- 2) Աշխարհի ամենաերկար գետը Նեղոսն է:
- 3) Աշխարհի ամենաաղի ծովը Մեռյալն է:
- 4) Մակընթացային ամենաբարձր ալիքը գրանցվել է Ֆանդի ծովածոցում:


58 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Ներքնուլորտում մթնոլորտային ճնշումն ըստ բարձրության չի փոփոխվում:
- 2) Եղանակի բոլոր փոփոխությունները տեղի են ունենում վերնուլորտում:
- 3) Պարզ կա եղանակին օդի ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը ավելի փոքր է, քան ամպամած օրերին:
- 4) Լեռնային շրջաններում ըստ բարձրության մթնոլորտային տեղումների քանակը ավելանում է:

59 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Գյուղատնտեսական արտադրությունն ունի գերազանցապես կետային տեղաբաշխում:
- 2) Տրանսպորտի համար բնորոշ է գծային տեղաբաշխումը:
- 3) Արդյունաբերության համար բնորոշ է համատարած տեղաբաշխումը:
- 4) Ոչ արտադրական(սպասարկման) ոլորտի ճյուղերին բնորոշ է բացառապես գծային տեղաբաշխումը:

60 Որ դիագրամում է պատկերված ԱՄՆ –ի տնտեսության ճյուղային կառուցվածքը.



61 Կղզեխմբային (արշիպելագային) պետություն Ասիայում: Աշխարհում բնակչության թվով ամենամեծ մահմեդական երկիրն է: Այդ պետությունն է.

- 1) Սաուդյան Արաբիան
- 2) ճապոնիան
- 3) Ինդոնեզիան
- 4) Ֆիլիպինները

51 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Հունիսի 22-ին Արեգակը զենիթային դիրք է գրավում հասարակածի բոլոր կետերի վրա:
- 2) Երկրի տարեկան պտույտի հետևանքներից է ցերեկվա և գիշերվա առաջացումը:
- 3) Անսաթվի փոփոխման գիծը համընկնում է Գրինվիչի(գրոյական) միջօրեականին:
- 4) ՀՀ-ի տարածքը գտնվում է երրորդ ժամային գոտում

52 Դեկտեմբերի 22-ին Արեգակի դիրքը հորիզոնի նկատմամբ ամենաբարձրն է.

- 1) հվ. լ. 23° 30'
- 2) հվ. լ. 90°
- 3) հվ. լ. 66° 30'
- 4) հս. լ. 23° 30'

53 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մայրցամաքային տիպի երկրակեղևը երկշերտ է :
- 2) Երկրի ամենավերին և կարծր շերտն անվանում են միջնապատյան:
- 3) Գրանիտը և մարմարը նստվածքային ծագման ապարներ են:
- 4) Երկրակեղևի հզորությունը լեռներում ավելի մեծ է, քան հարթավայրերում:

54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդությունը.

- 1) տունդրա-կմախքային հողեր-լորենի, հացենի
- 2) անապատ- սևահողեր - օշինդր, ուղտափուշ
- 3) տափաստան- մոխրագորշ հողեր- փետրախոտ, սիզախոտ
- 4) տայգա- պոդզոլային հողեր-եղևնի, սոճի

55 Այդ լիճը գոյացել է Արևելաաֆրիկական Մեծ բեկվածքում, ունի գրաբենային (տեկտոնական) ծագում, խորությամբ աշխարհում երկրորդն է:

- 1) Տանգանիկա
- 2) Չադ
- 3) Նյասա
- 4) Վիկտորիա

56 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Հյուսիսային Ամերիկայի մեծ մասը մտել է Գոնդվանայի կազմի մեջ:
- 2) Երկրակեղևի պլատֆորմային շրջաններում տիրապետում են ռելիեֆի հարթ ձևերը:
- 3) Հարավային Ամերիկայի մեծ մասը մտել է Լավրասիայի կազմի մեջ:
- 4) Տյան-Շանը և Ալթայը երիտասարդ լեռներ են:

31 «Արտադրություն - արդյունաբերության ճյուղ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) պլաստմասսայի արտադրություն-մետաղաձուլություն
- 2) կաուչուկի արտադրություն-էներգետիկա
- 3) պղնձի արտադրություն – քիմիական արդյունաբերություն
- 4) կոշիկի արտադրություն – թեթև արդյունաբերություն

32 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Ջարգացած երկրների տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
- 2) Աշխարհում հացահատիկային մշակաբույսերի մեջ ցանքատարածությամբ առաջին տեղը գրավում է եգիպտացորենը:
- 3) Համաշխարհային բեռնաշրջանառության մեծ մասը բաժին է ընկնում երկաթուղային տրանսպորտին:
- 4) Ջարգացած երկրների արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:

33 Ուրբանիզացման մակարդակն ամենաբարձրն է.

- 1) Հնդկաստանում և Արգենտինայում
- 2) Ավստրալիայում և Մեծ Բրիտանիայում
- 3) Չինաստանում և Իրանում
- 4) Վրաստանում և Թուրքիայում

34 Երկաթաքարի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Ճապոնիան և Չինաստանը
- 2) Բրազիլիան և Կանադան
- 3) Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը
- 4) Ռուսիան և Բելառուսը

35 Հայկական բարձրավանդակի (միջնաշխարհի) լեռնագրական միավոր չէ.

- 1) Հայկական հրաբխային բարձրավանդակը
- 2) Ներքին Տավրոսի լեռնային համակարգը
- 3) Փոքր Կովկասի լեռնային համակարգը
- 4) Միջլեռնային գոգավորությունները

36 «Լճային գոգավորություն - ծագում» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նեմրոթ -սողանքափլվածքային
- 2) Արփի – խառնարանային
- 3) Սևանա-սառցադաշտային
- 4) Ուրմիա- տեկտոնական

37 ՀՀ ծալքաբեկորավոր լեռներից են.

- 1) Գեղաման և Գուգարացը
- 2) Վայքը և Ջանգեզուրը
- 3) Արագածը և Փամբակը
- 4) Ջավախքը և Վարդենիսը

38 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ –ում ամռանը ներթափանցում են հասարակածային օդային զանգվածները:
- 2) ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի տարածքի մոտ կեսը:
- 3) ՀՀ լեռնամասնառային լանդշաֆտները մեծ տարածում ունեն հրաբխային շրջաններում:
- 4) ՀՀ-ում բացակայում են դաշտավայրերը:

39 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ-ն մշտական բնակության վերին սահմանը 2400 մ-ն է:
- 2) ՀՀ –ի ամենախիտ բնակեցված մարզերն են Տավուշը և Սյունիքը:
- 3) ՀՀ –ում ազգային փոքրամասնություններից են ֆրանսիացիները և չինացիները:
- 4) ՀՀ-ն բնակչության խտությամբ զիջում է բոլոր սահմանակից երկրներին:

40 ՀՀ մետալուրգիական համալիրի ճյուղ է.

- 1) մանգանի արտադրությունը
- 2) մոլիբդենի արտադրությունը
- 3) երկաթի արտադրությունը
- 4) անագի արտադրությունը

41 Գեղարքունիքի մարզի բուսաբուծության առաջատար ճյուղերն են.

- 1) հացահատիկի և կարտոֆիլի մշակությունը
- 2) բամբակենու և ծխախոտի մշակությունը
- 3) խաղողագործությունը և բանջարաբուծությունը
- 4) պտղաբուծությունը և շաքարի ճակնդեղի մշակությունը

42 ՀՀ –ում երկաթուղային հանգույցներ են .

- 1) Հրազդանը և Գյումրին
- 2) Կապանը և Գորիսը
- 3) Արարատը և Արտաշատը
- 4) Վանաձորը և Ստեփանավանը

43 ՀՀ դաշտավարության վերին սահմանն է.

- 1) 1400մ
- 2) 1800 մ
- 3) 2800 մ
- 4) 2200 մ

44 Էներգակիր ռեսուրսներ չեն.

- 1) ուրանը և այրվող թերթաքարը
- 2) նավթն ու բնական գազը
- 3) տորֆն ու քարածուխը
- 4) տուֆն ու կրաքարը

45 Գյուղատնտեսական հողահանդակներ չեն.

- 1) վարելահողերը
- 2) անտառները
- 3) արոտավայրերը
- 4) բազմամյա տնկարկները

46 Հողերի էրոզիայի առաջացման պատճառներից է .

- 1) հացահատիկային բույսերի մշակությունը
- 2) ցանքաշրջանառությունը
- 3) անտառահատումները
- 4) այգեգործության զարգացումը

47 Մթնոլորտի բնածին աղտոտման աղբյուր է.

- 1) հրաբուխները
- 2) տրանսպորտը
- 3) ջերմաէլեկտրակայանները
- 4) քիմիական գործարանները

48 Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է.

- 1) հորիզոնական զոնայականություն
- 2) վերընթաց գոտիականություն
- 3) ֆիզիկաաշխարհագրական շրջանացում
- 4) հրաբխականություն

49 Քարտեզի վրա Աղստև գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

50 Քարտեզի վրա Վայք քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

